

ԱՐԴԻ ԿԵՆԱՑ ՄԵՔԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

եւ

ՄԵ ԵԱՄԵ Ե ԳՈՐԾԱՏԱԿԱՆ

(Տես յէլ 91)



ԱՐԱԲԻԱԶԻՒԹԻՒՐ վաճառանոց տարին
անգամ մի ցուցակի վրայ կ'առնու
իր ունեցած վաճառքը կամ յունատարի
Յիշն, ինչպէս Գեղանի պարտիզ -
պանուի և Սամարուհի, կամ
յուլիսի Յիշն՝ ինչպէս Լուսի, Դիշրագին և
Գարուն։ Այս առթով կ'իմացով, թէ ո՞ր
նիմօք գէշ կերպով կամ վասու ծախուած են :
Առջիններուն համեմատութեամբ երեք փոք-
րապյն համարուած վաճառատանց ցուցակա-
գրութիւնն, որ տարւոյն ընթացքին մէջ զբեթէ
հասաւար վաճառաման զործ կը աեսնեն, սա-
կայն այս նկատմամբ իրարմէ շատ տարրեր
թուանշան կը ցուցընեն։ Սամարուհին, օրի-
նակի համար, մէկ միջին փրանկի, Գարուն
վեց միջինի, իսկ Գեղանի պարտիզպանունի
տասնուերկու միջինի : — Որչափ ալ տ-
ռաջին վաճառատան զրամագլուխը՝ երկրորդ ու
երրորդ հիմնարկութիւններէն աելի յաճախ կը
նորոգուի, սակայն անճառ է ըսելը, թէ վեց
կամ տասնուերկու անգամ տեւիլ է՝ Դիշրա-
գին և Լուսի վաճառատանց շահը 45էն
մինչեւ 20 միջին փրանկի կը հասնի :

Այս ամբողջութիւնը, համեմատելով նախ-
ընթաց տարւոյն հետ, կը ծառայէ տահմա-
նել ոչ մաքուր կամ զուտ շահը, այսինքն
ամէն մէկ բաժնին մաից և ծախուց իրարիէ
տարրերութիւնը։ Դիշրագին վաճառատան
մէջ այս տարրերութիւնն է զբեթէ երեսուն
միջին, յորոց քանառուշորը ծախուց համար
կը սպասին, որովհետեւ զուտ շահը համեմա-
տաբար խիստ չափաւոր է՝ քան ինչ որ պատի
վաճառականը պէտք է որ շահին եթէ անօ-
թութենէ չեն ուզեր մեռնիլ :

Սակայն մեծ վաճառատանց գործակառոք՝
շատ աւելի լաւ կերպով վճարուած են քան
պատիկներուն, և կրնան ոչ միայն դիշրագին-
ցութեան, այլ նաև հարստութեան համարի ։
Չկայ ուրիշ տեղ մը, ոչ ճարտարութեան և
ոչ ելեւմոից տնտեսութեան գործառնաւթեանց
մէջ՝ այսափ բարձր վճարը և հասուցում։
Դիշրագին մատակարարութեան խորհրդականնց՝
տէրութեան խորհրդեան պաշտօնէից կրկինը
կը շահին։ Խրաքանչիւր բաժնից զիհաւոր
կառավարը և անսոն տեղակալը կամ երկ-
րորդները վաճառմանց շահուց վրայ՝ առջին-
ները կ'ընդունին քսանեն՝ քսանուհինք հա-
զարի տարեկան հասուցում, ու երկրորդներն՝
իննէն տասնուերկու հազար փրանկի։ Այս զա-
սակարգին կը պատկանին Դիշրագին և Լուսի
վաճառատանց մէջ մտա 250 պաշտօնակալը։
Իսկ վաճառման վրայ կեցոյ յանձնակատար
արանց և կանանց բազմութիւնը, նիմթոց
պահանութիւն ընողը, թղթակցութեամբ պա-
րապողը, և այն, որոց վճարըը 1000 էն
մինչեւ 6000 կը բարձրանայ, միջին հա-
շուով իրարու վրայ 3000 ֆր. կը շահին,
բաց ի կերպակոյ։

Ասոր վրայ ետևէ են հիմայ յաւելով մար-
դափրական ընկերագրութիւններէ գոյացած
շահուն բաժինը, ինչ որ երեսուն տարի յա-
ռաջ պատմեիւն չունէին, և զազափարը և
գործարկութիւն՝ վերջ տարիներու մէջ ճար-
տարութեանց բարգավաճանաց արգիւնք են, գե-
ղակի պարտիզպանուայ հիմնադիրը Պարիսից՝
մեռնելու տաեն 600, 000 չափ գումար մը
կուակեց շահագրծելու, որպէս զի ծերանի
գործարաց թոշակ սահմանուի և արուի։ Օդ-

նութեան արկղը, որ Սամարուելոյն համար դեռ եւս տիրոջ զբանն է, Գարուն վաճառատան համար՝ առնուած ստուգանքէ ձևացած է: Այս վերջնը՝ իր հիմնարկութեան ծառայութեան համար կը պահէ երկու թժիշի, որ 1893 տարւցն մէջ 4700 զեղագիր պատուիրած են. իսկ լուսիր մէջ զբաղադք՝ ոչ լոկ ձրի թժիշի և զարման, այլ և հիւանդանց մ'այլ ունին, և պատի օրիորդաց համար առանձին խնամատաւն: Դիրքագիր հաստատութեան մէջ Պուսիլց 1876էն ի վեր նախատեսութեանց արկղ հաստատած է, որ ցայսօր 730, 000 փր. բաշխելէն զատ՝ ունի երկու միլիոնի զբանապուխ, և զբեթէ երկու հազար պաշտօնէից սեպհականութիւնն է: Իսկ տիկինն իր կողմանէ՝ թօղակաց արկղ մ'այլ հաստատելով հինգ միլիոնի զբանապուխ զրաւ, որ շահից բազմապակութեամբ վեց միլիոնի հասած է հիմայ, թէպէտեւ հարիւր նախկին պաշտօնակալց՝ տարուէ տարի 90, 000 փր. գումար կ'ընդունին այն արիդէն:

Սակայն եթէ մեծ զանաւառանց մէջ ծառայուղը աւելի լայ վարձատրուած են քան պղոտիկներու, պէտք է ըսել, թէ աւելի ալ աշխատանք ունին: Վասն զի անոնց միոյն մէջ եթէ աշխատողաց ու ծառայուղաց համացումար թիւը 3000 է, բայց օրուան մէջ այնպիսի ժամերն կը հանդիպին որ յանախորդաց բազմութիւնը զոհ ընելու չեն հանդիր, և կը բռնազատեն որ ժամերով սպասեն իրենց կարգին: Շւատի թէպէտ իրենց աշխատելու ժամանակը պահան է, և վաճառանցները աւելի յուսով կը զոցուին քան ինչ որ յառաջ, կիրակի օրուան հանդիսաց ճշշդիր կը տրուի և արձակուրդը յամարան, սակայն և պիտի միշտ մեծ է իրենց աշխատանքը՝ փորսապոյն վաճառանցաց համեմատութեամբ: Դժուարին կեանց մ'է իրենց, բայց լիսէլի վճարմամբ:

Կանայք այլ զրեթէ արանց հաւասար հաստուցմոնց ունին: Դիրքագիր և լուսիր մէջ 500ի մօտ է ասոնց թիւն, յորոց կէս ամուսնացեալք և այլք մասակարաբութեան կողմանէ ձրի բնակութիւն ունին ընդարձակ շինուածոց մէջ՝ սբ ունին կահարուեալ սեւեակ մը և ներմակեղէնը ձրի. բաց ասէ,

մեծ սրան մը հասարակաց ամենուն համար, ուր երբեմն հանգէսներ և տրախութիւններ կը կատարուին, և ուր կարգապահութիւնն ամենախիսս է, և երբէք թոյլ տրուած չէ երիկ մարզը այցելու. կամ հանդիսակից ընդունիլ: Այս ձրի բնակութիւնն որ ի Դիշրազին և ի լուսիր կամաւոր է և ոչ բռնազատ, պարտաւորիչ է ի Գարուն քանառմէկ տարուանէ պակաս ունեցող երկու սեռի համար: Սակայն շատ պատմնիր և օրիորդը այլ կը գտուին իրենց ընտանեաց հետ բնակողը ի Պարիս:

* *

Պաշտօնատեարց արաւած կերակուրը օրը 4, 60 երկու փրանկի կը նասի մասակարաբութեան համար: Լուսիր՝ որպէս զի ամուսնացեալ դրծակասարը կարենան իրենց ընտանեաց քով ճաշել, որոշեր էր որ փոխանակ ժամը ութիւն գոցելու՝ եօթին զօցէ վճառառատունը՝ յունուար, փետրուար, յուլիս ու օգոստոս ամիսներու, մէկմէկ փրանկի փոխարինութիւն առավել անոնց որ ճաշը վաճառանցէն գուրու կը փափարին ընել. որմէ շուալ ետ կեցան, տեսնելով թէ անկարելի էր իրենց մէկ փրանկով այն ճաշը վայելել՝ ինչ որ ունեին մասակարաբութեան ծախորվ:

Կերակուրը ինամերօն պասարաստուած և ընալիք են: Լուսիր իր խոնանոցին համար կատարելազոր շոգեշարժ հանգերձանց ունի. 2, 400 լիտր թանապուր կը պատրաստուի՝ ամեն մէկը ութի՞նարիւր լիտր ընդունակութիւն ունեցող երեք մեծ կաթացից մէջ. օր ըստ օրէ կը սպառին տան տակառակը զիւոյ, 1, 400 հզրով. հացի, 1, 200 հզրկ. մնյ, 250 հզրզը. կարափի, 600 հզրզը. ձկան, և այլն, և կը ծառայեն տասնուհինգ խոնարաք և ութուն սպասարոր:

Դիշրազին վաճառանցին մէջ ուտեստի համար երկու միլիոն փրանկի ժամփ կ'ըլլայ. ինը միլիոնի ալ՝ պաշտօնատեարց յորոց կամ համեմատական թշշակաց ։ Այս տասնումէկ միլիոնը ընդհանուոր ծախուց մեծապոյն մասը կը կազմեն. մասցածը կը բաժնուի այն ծախուց վերայ՝ որ կ'ըլլակի մերմակեղինաց կամ կերպառուց պատրաստութեան, վաճառուց առ

ուարման ի գաւառս, երիվարաց և կառաց պահպանութեան ի Պարիս, լուսաւորութեան և ջերմացուցման մեքենայից, որոնք հազար ձիու հաւաքական ոյժ ունին և կը սպառեն 4000 տոկառաշափ ածիոյ՝ նոյնափ թուով սաստիկ լուսով վաստած կանթեղներու լոյս տալով։

Առջի վաճառականաց զրիթէ բոլորովին անծանօթ ժակը մ'այլ՝ ծանուցմանց համար եղածն է որ դիշրագնի և լուվիրի համար՝ երկուորկիսէն երեք միջինն փրանկի կը հասնի։ Այլ և այլ հանճարեղ զիւսերով և կերպով կ'ըլլան առնեք. օրինակ իմն, լուվիր ա-

մէն օր 500 մետաղեայ ու զանգակիկներով կը բաշխէ տղայց, որոց ծափքը 50,000 փրանկի կ'ըլլայ իրեն ամէն տարի. կամ ձրի ճաշարան (busset) ունի յաճախորդաց համար, որ նոյնափ գումարի կը նոտի. կամ 25,000 տրցակ մանուշակաց զոր ի Գարան կը բաշխեն ի 20 մարտի, գարնան սկզբնաւորութեան։ կամ ըրի նուէրներ զօր վամարունին կ'ընէ, թէյի՛ շաքարի ամաններ, և այլն, ուրբաթ օրուան յաճախորդաց, սրգէս զի ժողովրդեան աշքին այդ շաքարուշակ համարուած օրը, վաճառմունք շինափանին։

ԻՇԽԱՆՈՅ ԿՂԶԻՓ

—•••••—

(Տես յէջ 121)



ԻՇԽԻԲՈՅԻ պղտիկ քաղաքէն դէպ ՚ի արևմուտք՝ ծովեղերաց վերայ գեղեցիկ ճամբար այլ մը կը սկսի, որ բոլոր կղզիքը կը շրջապատէ, և մասամբ նոր շինուած է։ Այս ճամբուն վերայ կ'ընկնի Ս. Նիկողայոս պղտիկ վանքը, այս վանքիս մօս, ճիշտ Ցէրէբէնթ (Մէտէֆ Ատամար) կղզեակին դիմաց, ծովեղերաց վրայ կան ընդարձակ աւերակներ, հողակուտի ներքեւ ծածկուած, որ ժողովուած հանքի մը կը կղզանքով խառն է։ Այս աւերակներն քիչ մը խառնելով, կ'իմացուի մէկէն որ մեծ շէնքի մը մնացորդներ են։ խուցերու կիսակործան կամարներ,

1. Այս տեղուանք երկաթի հանք մը գտուած էր, զոր ժամանակ մը պեղեցին, հիմա թողուած է։ Աբդէն ամբողջ կղզւոյն հոգի երկաթային է։

փլած խցիկներ, սրահներ, հաստ պատեր՝ վրան բուսած մացառներու և հողերու ներքեւ մնացած, ընդարձակ տեղ մը, որ հիմակ այդ խցիկներուն պատճառաւ՝ տեղւոյն անունը Քամարայ կ'ըստի. Քանդակիալ կտորուանք գետինը յրուած, որոց խոշոր մասունք գործածուած են, քիչ կործանած սըրահներուն պատերը ներողելու, կենդաննեաց ախոռ շինելու համար։ Այս սրահներուն մէկն մասուռ եղած կ'երեւի։ Հասարակաց ճամբէն քիչ մը վեր, բարձրութեան մը վրայ կ'ընկնի ընդարձակ ջրամբար մը պարսպ և կիսով չափ հող լեցուած, որ դարձեալ յայտնի նշան մ'է, ժամանակաւ այս շէնքին կարեւոր տեղ մը եղած ըլլալուն։

Քամարայի այս խեղճ աւերակներն, որք հիմակ ծովային թոշնոց և այծերու յաճախած տեղ մը դարձած է,